ՀՏԴ 330.3(479.25/243) *Ռազմական տնտեսագիտություն*

Ազատ Դավթյան
տնտեսագիտության թեկնածու
Աշխատավայրը՝ ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ԱՌՀԻ-ի Տարածաշրջանային ռազմավարական վերլուծությունների կենտրոն, գիտական-վերլուծաբան
Էլեկտրոնային հասցեն՝ azat-davtyan@mail.ru
Գայանե Հարությունյան
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Աշխատավայրը՝ ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի տնտեսագիտության ինստիտուտ, ավագ գիտաշխատող
Էլեկտրոնային հասցեն՝ gharoutyunyan@gmail.com

ՌԱԶՄԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԴԻՏԱԿԵՏԻՑ

Խաղաղ և պատերազմական պայմաններում պետության ռազմատնտեսական հատվածի զարգացումը պահանջում է, առաջին հերթին, մարդկային, նյութական և տեխնոլոգիական ռեսուրսների արդյունավետ կառավարման մեխանիզմների կիրառում և պետություն-մասնավոր հատված ոլորտային գործընկերության ընդլայնում: Այդպիսի պայմաններում, էական նշանակություն ունի Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության ռազմական տնտեսության ռազմավարական նպատակակետերի մշակումը և հայկական ռազմական արդյունաբերության զարգացման գործում պետության և մասնավոր հատվածի համագործակցության արդյունավետության մեծացման հնարավորությունների վերհանումը:

Բանալի բառեր: *ռազմական տնտեսություն, ՌԱՀ, անվտանգություն, ռեսուրսների կառավարում, պետություն-մասնավոր հատված գործընկերություն*

Азат Давтян
Гаяне Арутюнян

РАЗВИТИЕ ВОЕННОЙ ЭКОНОМИКИ С ТОЧКИ ЗРЕНИЯ ЭКОНОМИЧЕСКОЙ ИНТЕГРАЦИИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ И РЕСПУБЛИКИ АРЦАХ

Развитие военно-экономического сектора государства требует применения эффективных механизмов управления людскими, материальными и технологическими ресурсов и расширения партнерских отношений между государством и частным сектором. В таких условиях важное значение имеет выявление стратегических целей военной экономики Республики Армения и Республики Арцах и возможностей повышения эффективности государственно-частного партнерства для развитии военной промышленности.

Ключевые слова*: военная экономика, ВПК, безопасность, управление ресурсами, государственно-частное партнерство*

Azat Davtyan
Gayane Harutyunyan

DEVELOPMENT OF THE MILITARY ECONOMY FROM THE POINT OF VIEW OF ECONOMIC INTEGRATION OF THE REPUBLIC OF ARMENIA AND THE REPUBLIC OF ARTSAKH

The development of the military-economic sector of the state requires, first of all, the application of effective mechanisms of human, material and technological resources management and the expansion of public-private sector partnerships. Under such conditions, it is essential to identify the strategic goals of the military economy of the Republic of Armenia and the Republic of Artsakh as well as opportunities for enhancing the effectiveness of public-private partnerships in the development of military industry.

***Key words**: military economy, military-industrial complex, security, resource management, public-private partnership*

Ռազմական տնտեսության ռազմավարական նպատակակետերը

Ռազմական տնտեսության խնդիրն է պետության և զինված ուժերի ռազմատնտեսական կարիքների բավարարումը և պատերազմի նախապատրաստման ու վարման տնտեսական ապահովումը: Ռազմական տնտեսության զարգացումը նպաստում է անվտանգային միջավայրի դինամիկայի մեծ անորոշությունների պայմաններում ռեսուրսները արագ մոբիլիզացնելուն և ռազմատնտեսական կարիքների բավարարման նպատակով դրանք արդյունավետ օգտագործելու կարողության ձևավորմանը:

Ռազմական տնտեսության զարգացման տնտեսական ռազմավարական նպատակակետերից է տեխնոլոգիական բեկումնային առաջընթացի ապահովումը, որը պետք է ընդգրկի տնտեսության բոլոր ճյուղերը՝ նպաստելով տնտեսական անվտանգության բարձրացմանը: Դրան հասնելու համար անհրաժեշտ է ռազմաարդյունաբերական համալիրում (ՌԱՀ) ժամանակակից տեխնոլոգիաների մշակման և ներդրման, ինչպես նաև նորամուծական զարգացման խթանման հստակ քաղաքականության իրականացում: Այս համատեքստում, կարևորվում է գիտական, փորձնական, փորձարարական և արտադրական սարքավորումների, սարքերի, ծրագրերի և այլի ներկրման կրիտիկական կախվածության հաղթահարումը:

Վերջինիս իրագործումը հնարավոր է միայն ՌԱՀ-ում համապատասխան նյութատեխնիկական բազայի առկայության, դրա անընդհատ վերարտադրության և կատարելագործման դեպքում: Հենց այդպիսի բազայի ստեղծման գաղափարը պետք է դառնա հայկական երկու պետությունների արդյունաբերական ոլորտների առաքելությունը և լինի դրանց հետակա բարեփոխման, արդիականացման և զարգացման, ոլորտների տեխնիկական, տեխնոլոգիական և կառուցվածքա-արտադրական բնութագրիչների ձևավորման, արդյունաբերական քաղաքականության գործիքարանի, դրա իրականացման համար աշխատանքային և ֆինանսական համապատասխան ռեսուրսների ներգրավման առաջնահերթությունը:

Այդ նյութատեխնիկական բազայի ստեղծման մյուս նախապայմանն է տեղում արտադրվող և արտերկրից ձեռքբերվող զինատեսակների, արտադրատեսակների և այլ նյութական արժեքների հարաբերակցության օպտիմալացումը: Մյուս կողմից՝ անհրաժեշտ է ռազմարդյունաբերական և ռազմատեխնիկական համագործակցության բազմազանեցման (դիվերսիֆիկացիա) ապահովում՝ այլ երկրների հետ ռազմատեխնիկական համագործակցության երկկողմանի ծրագրերի իրականացմամբ՝ միաբևեռայնության և որևէ պետությունից կախման աստիճանի նվազեցմամբ[1]:

Հայաստանի և Արցախի ռազմական տնտեսության ռազմավարական տնտեսական այլ նպատակակետերի շարքում կարևորվում են ռազմաարդյունաբերական կազմակերպությունների կողմից քաղաքացիական արտադրանք թողարկելու հնարավորությունների ընդլայնումը, ինչի հետևանքով կմեծանա նաև նրանց ինքնաֆինանսավորման հնարավորությունը: Ընդ որում՝ կարևորվում է տվյալ քաղաքացիական արտադրանքի նկատմամբ ներքին պահանջարկի խթանումը:

Վերոնշյալ նպատակակետերին հասնելու համար անհրաժեշտ է իրականացնել մրցունակ ռազմատնտեսական պլանավորում, որը պետք է մշակվի ռեսուրսների օգտագործման ռազմատնտեսական արդյունավետության գնահատման միջոցով: Այստեղ որոշվում է ռազմատնտեսական խնդիրների բավականին լայն շրջանակի հարցեր՝ ներառյալ սպառազինությունների և ռազմական տեխնիկայի արտադրության ծրագրերի ռազմատնտեսական հիմնավորումը[2]: Այդպիսի գնահատման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև նրանով, որ

[1] Տես Մ. Ռ. Իսախանյան, Ա. Պ. Պետրոսյան, ՀՀ ռազմական արդյունաբերության համակարգի զարգացմանն ուղղված հիմնական միջոցառումները պաշտպանական բարեփոխումների շրջանակներում, ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 3, էջ 21, 2011

[2] Տես Викулов, С. Ф, Хрусталев, Е. Ю, Методы оценки военного-экономической эффективности военного строительства, 2010, file:///C:/Users/Dell/Downloads/metody-otsenki-voenno-ekonomicheskoy-effektivnosti-voennogo-stroitelstva.pdf

բյուջետային սահմանափակումների պայմաններում, ռազմական ուժերի մարտունակության մակարդակը կախված է դառնում ոչ միայն ռեսուրսների ծավալից, որոնք հատկացվում են երկրի պաշտպանությանն ու անվտանգությանը, այլ նաև դրանց օգտագործման արդյունավետությունից: Ավելին՝ ազգային անվտանգության ապահովման հաշվառմամբ ռեսուրսների օգտագործման ռազմատնտեսական արդյունավետության գնահատումը կարևորվում է նաև նրանով, որ այն պետք է նպաստի տեղական արտադրության սպառազինությամբ, ռազմական տեխնիկայով և ռազմատեխնիկական գույքով Հայաստանի և Արցախի զինված ուժերի ապահովման խնդրի լուծման հնարավորությունների և խոչընդոտների բացահայտմանը:

Ռեսուրսների օգտագործման ռազմատնտեսական արդյունավետության գնահատումները պետք է հանգեցնեն տարածաշրջանային ռազմաքաղաքական ու տնտեսական իրավիճակին համահունչ Հայաստանի և Արցախի տնտեսության մոբիլիզացիոն պատրաստման արդյունավետության ապահովմանը: Դա, իր հերթին, պետք է դառնա հայկական երկու պետությունների ռազմական տնտեսության հաջորդ կարևորագույն նպատակակետը:

Ռազմական դրության պայմաններում տնտեսության ճյուղերի անխափան գործունեության ապահովումը կարող է կատարվել տարբեր ճանապարհներով: Դրանցից կարևորագույնն է ռազմական և հանրային սպառման կարևոր արտադրատեսակների թողարկման կրկնօրինակումն ու պահուստավորումը: ՈՒստի Հայաստանի և Արցախի տնտեսությունների մոբիլիզացիոն պատրաստման և, միաժամանակ, ռազմական տնտեսության նպատակակետերից է անհրաժեշտ վաղօրոք պահուստային հզորությունների ստեղծումը, որոնք ապահովված կլինեն համապատասխան նյութերով կամ համակցող արտադրանք թողարկելու կարողություններով: Պատերազմական պայմաններում կարևորագույն ապրանքների արտադրության պահուստավորման տարբերակների նախօրոք մշակումը կհեշտացնի պահպանված ձեռնարկությունների հիման վրա նոր արտադրական կոոպերացիաների կազմակերպումը[1]:

Մյուս կողմից՝ ռազմական տնտեսության արդյունաբերական ձեռնարկությունները պետք է օպերատիվ ձևով տեղեկացված լինեն ռազմական պլանավորման մասին, որի շնորհիվ հնարավորություն կստանան վերակառուցել արտադրությունը ըստ նոր պահանջների, լինեն պահանջված և նպաստել տեխնոլոգիական զարգացմանը: Արդյունաբերական արտադրության վերակառուցումը, իր հերթին, պահանջում է փոխհամաձայնեցված կառավարչական որոշումներ, հետևաբար, պետք է իրականացվի պետական ռազմավարական պլանավորման հիման վրա[2]:

Պետության մոբիլիզացիոն պատրաստման համակարգի կատարելագործման պարտադիր պայմաններից է նաև մոբիլիզացիոն առաջադրանք ունեցող կազմակերպություններին պետական աջակցության մեխանիզմների մշակումը՝ անկախ այդ կազմակերպությունների տնտեսական կարգավորման և սեփականության ձևերից:

Ռազմական տնտեսության զարգացման համատեքստում Հայաստանի և Արցախի տնտեսությունների ինտեգրման հնարավորությունները

Ակնհայտ է, որ պետության կողմից իրականացված ռազմական ծախսերի մի զգալի մասը վերադառնում է տնտեսություն՝ ռազմաարդյունաբերության և արտադրական այլ ոլորտներում պետական պատվերով արտադրության կազմակերպման համար: Ռազմաարդյունաբերության և ազգային տնտեսության փոխառնչությունները նպատակահարմար է ներկայանել գծապատկերի տեսքով (Տե՛ս Գծապատկեր 1[3]): Գծապատկերում, ըստ էության, արտացոլված է ռազմա-

[1] Տես Ա. Ռ. Գևորգյան, ՀՀ տնտեսության մոբիլիզացիոն պատրաստման համակարգի կատարելագործման որոշ խնդիրներ, ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 3 (61), էջ 59, 2009

[2] Kane, R., National governments and their defense industrial bases: A comparative assessment of selected countries, 2009, http://www.defenceandsecurity.ca/UserFiles/File/pubs/CADSI_Comparative_Assessment_National_Governments_and_Defence_Industrial_Bases_2009.pdf

[3] Տես Գ. Է. Հարությունյան, Ռազմաարդյունաբերության դերն ու նշանակությունը տնտեսության զարգացման ընդհանուր համակարգում: Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում (Գիտական հոդվածների ժողովածու-2017), Երևան, 2017, էջ 240-245:

արդյունաբերության ոլորտի ներուժային համակարգաստեղծ նշանակությունն ամբողջ տնտեսության համար՝ պայմանավորված տնտեսության այլ ճյուղերի հետ համագործակցության լայն հնարավորություններով: Հայաստանի և Արցախի տնտեսությունների փոխկապված զարգացման հնարավորությունները դիտարկենք գծապատկերում արտացոլված կապերի համատեքստում, ինչը հնարավորություն կտա հստակեցնել, թե երկրներից յուրաքանչյուրն իր ներուժային հնարավորություններին և համեմատական առավելություններին համապատասխան, ինչպիսի նպաստ կարող է բերել համատեղ ռազմական տնտեսության զարգացմանը:

Այսպիսով, ռազմական նշանակության արտադրանք կարող են թողարկել մեքենաշինության այնպիսի ենթաճյուղեր, ինչպիսիք են ռադիոէլեկտրոնային, էլեկտրատեխնիկական, օպտիկամեխանիկական, սարքաշինական արտադրությունները, որոնք իրենց հերթին հիմնվում են մետաղամշակման և քիմիական արտադրությունների վրա, միաժամանակ քիմիական արդյունաբերության որոշ ենթաճյուղեր ինքնին կարող են հանդես գալ որպես ռազմական արտադրանքի թողարկման առանձին ոլորտ, իսկ ժամանակակից սպառազինությունների գերակշիռ մասը հիմնվում է տեղեկատվական տեխնոլոգիաների վրա:

Գծապատկեր 1. Ազգային տնտեսության և ռազմաարդյունաբերության փոխկապվածությունները

Նշված արտադրական ոլորտների գծով հայկական երկու հանրապետություններից մասնագիտացման ներուժ ունի Հայաստանը: Խոսքը մասնավորապես երկրում գործող բարձր տեխնոլոգիական որոշ արտադրական ուղղությունների մասին է, որոնք կարող են զգալիորեն նպաստել ռազմաարդյունաբերության զարգացմանը: Դրանք են տարբեր տեսակի միակցիչների արտադրություն (մասնավորապես, արդյունաբերական նշանակության, գերբարձր հաճախականային սարքերի (ֆիլտրեր, գումարիչներ, բաժանիչներ, կամրջակներ, ճյուղավորիչներ, պտտական անցումներ և այլն) նախագծում և արտադրություն, ռադիոտեխնիկական և անտենային համակարգերի, լազերային տեխնիկա և կապի միջոցների, չափիչ սարքերի, տվիչների, կատարող հանգույցների արտադրություն, ռոբոտաշինություն, կոմպոզիտային նյութերի արտադրություն, քիմիական միացությունների, սոսինձի, հատուկ նշանակության ապակու արտադրություն, տարբեր

տիպի բյուրեղների աճեցում, անօդաչու թռչող սարքերի արտադրություն, փոքր հեռավորության հրթիռների արտադրություն[1]:

Ինչ վերաբերում է սննդի և թեթև արդյունաբերությանը, ապա դրանց առանձնացումն արտադրական այլ ոլորտներից պայմանավորված է փոխազդեցությունների առավել թույլ դրսևորմամբ, քանի որ նշված ոլորտները ռազմական տնտեսությանն առնչվում են միայն զինված ուժերի համար պետական գնումների շրջանակներում, որոնք արժեքային ցուցանիշներով նկատելիորեն զիջում են ռազմական ծախսերի այլ բաղադրիչներին: Այնուամենայնիվ, պատերազմական իրավիճակում գտնվող փոքր բաց տնտեսության համար, որտեղ արդյունաբերական արտադրանքի ծավալները չեն գերազանցում ՀՆԱ 20%-ը բանակի համար պետական պատվերների իրականացումը կարող է հաջող արտադրական գործունեության մեկնակետ ծառայել, հատկապես եթե հաշվի առնենք, որ նշված երկու ոլորտներում առավել նպատակահարմար է փոքր ձեռնարկատիրության զարգացումը: Նկատենք, որ այս երկու ոլորտների զարգացման նկատելի ներուժ ունի նաև Արցախի հանրապետությունը: Մասնավորապես, Արցախում բավական հաջողությամբ գործում է 2004 թ.-ին հիմնված «Արցախի կարի-կոշիկի արտադրական միավորումը», որտեղ արտադրվում են զինվորական համազգեստ, կոշիկներ, ռազմական նշանակության ջրակայուն և հրակայուն հագուստներ[2]: Կյանքի է կոչվել նաև «Ղարմետաքսկոմբինատ. Բիզնես միջավայր» պիլոտային ծրագիրը, որի շրջանակներում գործում են երեք արտադրություններ՝ բրդյա թելի արտադրություն, բամբակյա ու կիսաբամբակյա կտորեղենի արտադրություն եւ ձեռագործ գորգերի արտադրություն): Դրական են միտումները նաև սննդաարդյունաբերության ոլորտի զարգացման առումով: Ռազմական տնտեսության զարգացման տեսանկյունից մեծ հետաքրքրություն է ներկայացնում հատկապես կաթնամթերքի արտադրությունը և պահածոների արտադրությունը, որի հումքային բազան երկրի գյուղատնտեսությունն է՝ էկոլոգիապես մաքուր գյուղմթերքների աճեցման և ստացման էական համեմատական առավելությամբ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայ-արցախյան զինված ուժերի զորամասային տնտեսությունների մեծ մասն այսօր հայտնի պատճառներով կենտրոնացած է Արցախի Հանրապետության տարածքում, ապա մեծ ձեռքբերում կլինի, եթե սննդաարդյունաբերական և թեթև արդյունաբերական արտադրանքի նկատմամբ զորամասային տնտեսության պահանջարկը հնարավոր լինի ամբողջապես բավարարել տեղական արտադրանքով:

Միաժամանակ, չպետք է բացառել նաև արդյունաբերության այլ ոլորտների զարգացման և ՌԱՀ-ին ակտիվ մասնակցության հնարավորությունը: Անհրաժեշտ է աստիճանական անցում կատարել գյուղատնտեսական զարգացման ձևից դեպի արդյունաբերականը, երկրում առկա հանքահումքային ներուժը ծառայեցնելով արդյունաբերական արտադրանքի թողարկմանը: Նման հեռանկարն, իհարկե, պայմանավորված է զգալի բարդություններով, մասնավորապես, ներդրումային հոսքերի սակավությամբ, որի պատճառը փաստացի պատերազմական վիճակն է, և աշխարհաքաղաքական իրողության փոփոխության խիստ անորոշությունը: Նկատենք, որ այս հանգամանքները որոշիչ են նաև Հայաստանի տնտեսության զարգացման համար, թեև՝ համեմատաբար թույլ ազդեցությամբ: Ներկայում Արցախի տնտեսությունում նոր տեխնոլոգիական կամ առհասարակ՝ արդյունաբերական արտադրության ոլորտների զարգացման հնարավորությունները սերտ կապված են Հայաստանում համապատասխան ոլորտների զարգացման հնարավորությունների հետ: Անհրաժեշտ է գործարարներին խթանել, որպեսզի քիչ թե շատ հաջողությամբ գործող ձեռնարկությունների դուստր ձեռնարկություններ հիմնեն նաև Արցախում: Նման մոտեցումը թեև ռիսկերի կառավարման տեսանկյունից չի կարող արդարացված համարվել, սակայն հիմնավորված է պետական և ազգային գերակայությունների տեսանկյունից:

---

[1] Բարձր տեխնոլոգիական արտադրություններին անդրադարձը ներկայացված է ըստ «Երևանի կապի միջոցների գիտահետազոտական ինստիտուտի» (ԵրԿՄԳՀԻ) տնօրեն Մհեր Մարկոսյանի՝ Հայաստան-Սփյուռք 6-րդ համաժողովին հնչեցրած ելույթի, որը վերաբերում էր ՀՀ ռազմաարդյունաբերության ներուժի զարգացմանը: Ելույթին կարելի է ծանոթանալ հետևյալ հղումով.
http://www.mindiaspora.am/res/Hamajoxovner/2017/6/Eluytner/24/Mher_Markosyan.pdf

[2] Տես Աղբյուրը՝ ձեռնարկության կայք-էջ. http://www.artsakhgroup.am/ru/%D0%9E-%D0%BD%D0%B0%D1%81/

Ռազմաարդյունաբերության զարգացման գործում պետության և մասնավոր հատվածի համագործակցության արդյունավետության բարձրացման ուղիները

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ պետություն-մասնավոր հատված համագործակցությունը մեծացնում է ռեսուրսների կառավարման արդյունավետ մեխանիզմների մշակման և կիրառման հնարավորությունները: Պետությունը դաշինքի մեջ մտնելով գործարարության հետ, որպես կանոն, ստանում է ոչ միայն բյուջեի վրա փոքր ճնշումներ, այլ նաև տնտեսական ոլորտներում նախագծերի կառավարման ավելի ճկուն և գործուն մեխանիզմներ, իսկ գործարարությունը՝ որոշակի երաշխիքների և հնարավորությունների փաթեթ: Պետություն-մասնավոր հատված գործընկերության արդյունավետությունը ապահովվում է ոչ այնքան ֆինանսական ռեսուրսների ուղղակի ներդրումներով, ինչքան տվյալ նախագծին առնչվող ռիսկերի համախառն կրճատմամբ:

Պետություն–մասնավոր հատված գործընկերությունը ունակ է բարձրացնել պաշտպանական նախագծերի իրագործման արդյունավետությունը շնորհիվ դրանցում մասնավոր գործարարության մասնակցության, նվազեցնել բյուջեի վրա ճնշումները, ինչպես նաև հնարավորություն տալ ներգրավելու կառավարչական լավագույն կադրերին և նորագույն տեխնոլոգիաներ:

Օրինակ՝ ԱՄՆ-ի կառավարությունը մասնավոր հատվածի հետ համատեղ սահմանում է հետազոտությունների կատարման կոնկրետ նպատակներ, որպեսզի պաշտպանական հետազոտությունները դառնան ավելի արդյունավետ և նպատակաուղղված նոր ռեսուրսների ստեղծմանն ու սահմանափակ ռեսուրսների ընդլայնմանը: Քանի որ ԱՄՆ-ի պաշտպանության նախարարությունը որդեգրել է տեխնոլոգիական գերազանցության հասնելու ռազմավարություն, նա շարունակաբար դրդում է այն ոլորտներում պետական գործունեության ակտիվացում, որոնք կարող են նշանակալիորեն նպաստել տնտեսության զարգացմանը: Բոլոր դեպքերում գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական հետազոտությունների ծախսերը իրականացվում են ռազմական կարիքների համար, բայց օգուտ են տալիս նաև ամբողջ տնտեսությանը[1]: Հայաստանում և Արցախում պետություն–մասնավոր հատված գործընկերության շրջանակներում նպատակահարմար է ռեսուրսների բաշխման որոշումները կայացվեն պետական նպատակային ծրագրավորման (ՊՆԾ) մոտեցման կիրառմամբ: Վերջինիս շնորհիվ հնարավոր է խուսափել նախատեսված և իրականացված ծախսերի անհամապատասխանությունից և դրա միջոցով ապահովվում է մարդկային, նյութական, տեղեկատվական և ֆինանսական ռեսուրսների համակարգերի օպտիմալ ինտեգրում[2]:

ՌԱՀ-ի զարգացման վրա ՊՆԾ դրական ազդեցությունը սերտորեն առնչվում է ռազմաարդյունաբերական արտադրանքի պահանջարկի խթանման համակարգված քաղաքականության հետ: Այդ առումով պետք է կարևորել երկակի նախանշանակման արտադրանքի նկատմամբ ներպետական պահանջարկի ձևավորումը, որը պետք է բխի պետության զարգացման տնտեսական ծրագրերից և արտացոլվի պետական բյուջեի համապատասխան բաժնում: Այս համատեքստում, անշուշտ, անհրաժեշտ է իրականացնել արտադրական կարողությունների ճիշտ գնահատում, ռազմաարդյունաբերության ոլորտում գիտահետազոտական, փորձակոնստրուկտորական, արտադրական և կազմակերպական աշխատանքների գծով պետպատվերի ձևավորում և, բնականաբար, համապատասխան ֆինանսավորում[3]:

Դրա հետ մեկտեղ կարևորվում է գիտակրթական և նորամուծական ոլորտներում կոնկրետ ծրագրերին և նորամուծությունների առևտրայնացմանը պետությունից բացի նաև խոշոր հայրենական ձեռնարկությունների ֆինանսական աջակցության օրենսդրորեն ամրագրված

[1] Տես Gansler, Jacques S. Democracy's arsenal: Creating a twenty-first-century defense industry, 2011

[2] Florin-Eduard Grosaru, Defense resources management and performance management in a double-way relationship

[3] Տես Ա. Գ. Դավթյան, Ա. Պ. Պետրոսյան, Մ. Ա. Փարվանյան, Ազգ-բանակ համակարգի ձևավորման գործում պետական նպատակային ծրագրերի մշակումն ու իրագործումը որպես ՀՀ գիտատեխնիկական-տնտեսական համալիր զարգացման խթանիչ գործոն. ՀՀ-ում ռազմավարական-պաշտպանական պատվերի նորամուծական հեռանկարը, ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 4(90). 2016

կորպորատիվ պարտավորության հաստատումը: Դա իր հերթին կնպաստի ՊՆԾ իրագործման համար հույժ կարևոր գիտություն–նորամուծություն–նորամուծության առևտրայնացում–արտադրություն շղթայի արդյունավետության մեծացմանը: Այս քաղաքականությունը հատկապես արդիական է բյուջետային միջոցների և օտարերկրյա ներդրումների սղության պայմաններում:
Հայաստանում և Արցախում խաղաղ և պատերազմական պայմաններում ռազմական տնտեսության ոլորտում պետություն-մասնավոր հատված գործընկերությունը կարող է ծավալվել նաև հետևյալ ուղղություններով.

- իրենց արտադրական պոլիգոններում և առկա ենթակառուցվածքներում մասնավոր կազմակերպությունների կողմից ռազմական տեխնիկայի ընթացիկ վերանորոգման և պահպանման կազմակերպում,
- պատերազմի դեպքում դիրքերի ամրապնդման, խրամատների կառուցման և այլ կարիքների համար մասնավոր կազմակերպությունների կողմից անհրաժեշտ պահեստամասերի, գործիքների, տեխնիկական այլ միջոցների արտադրության կազմակերպում,
- ռազմաճակատում, զորամասերում և այլ վայրերում համապատասխան մասնագիտական աշխատանքները տեղում իրականացնելու համար մասնավոր կազմակերպությունների մասնագետների գործուղում (տարբեր ոլորտների ճարտարագետներ կամ տեխնոլոգներ),
- մասնավոր կազմակերպությունների կողմից գիտատեխնիկական գումարտակների ստեղծման աջակցություն, որոնք այնուհետև կցվելով տարբեր զինվորական կառույցներին կարող են իրականացնել անհրաժեշտ հետազոտական, հետախուզական կամ վերլուծական աշխատանքներ: